

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁԻ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Մեր Շարականացին սկիզբը գրուած «Յօրինողը Շարականաց» խորագրով ցանկին համաձայն, «զՀանգստեանսն և ըզՄարտիրոսացն, և ևս զբազումս ի մանկանցն» երգած է Պետրոս Գետադարձն: Թէ իրականութեան որքան համապատասխան է այս վերագրումը Համօրէն Ննջեցելոց կանոնին վերաբերմամբ՝ կ'արժէ քննել քիչ մը մօտէն:

Մեր կողմէ կատարուած քննութիւնը ցոյց կու տայ որ յիշեալ կանոնին մաս կազմող 17 պատկերները չեն պատկանիր Գետադարձին, այլ՝ յեանազոյն գրողներու:

Ակնարկուած 17 պատկերներէն երեքը կը գտնուին ԲԿ, չորսը ԳԿ, ութը ԴԶ և երկուքը ԴԿ ձայներուն մէջ. այսպէս.

ԲԿ

- Ի գալըստեան Տեառն.
- Գոյ զօրութեանց թագաւորն.
- Սարսափելի որոտմամբ:

ԳԿ

- Լեառն վիմածին.
- Յանըսկըզբնական.
- Փառք քեզ Աստուած.
- Ընդ զըւարթունս երկնից:

ԴԶ

- Բազմերամբ վեհագունիցըն.
- Ահագին է օրըն.
- Ձահագին համբաւ.
- Որ հայրական իշխանութեամբ.
- Ժողովեալքս ի սաճար փառաց.
- Մերձեցայ ևս.
- Անըսկիզբն Աստուած.
- Մեծ և անեղ է:

ԴԿ

- Որ ի Հօրէ առաքեցար.
- Ես սասցի Տէր ողորմեա:

Մեր հաւաստումը հիմնաւորելու համար ստորև կու տանք թիւերն ու էջերը այն ձևագիր Շարականացներուն, ուր յիշ-

եալ պատկերները կը գտնուին իբրև յետագայ յաւելումներ, գրուած արտաքոյ՝ Գետադարձի համարուած հնազոյն կանոններէն:

Կը դասաւորենք այբուբենական կարգով ի դիւրութիւն շարականներու ուսումնասիրութեամբ զբաղող բանասէրներու:

1. — Ահագին է օրըն. — Տպ. Երուսաղէմ, 1936, էջ 899, ԴԶ, Մեծացուցէ. — Ձեռ. Ս. Յ. Թիւ 1556 (էջ 260), 1654 (633), 1700 (586):

2. — Անըսկիզբն Աստուած. — Տպ. 907, ԴԶ, Տէր յերկնից. — Ձեռ. 1556 (էջ 262), 1654 (635), 1700 (587), 1987 (466), 3051 (590):

3. — Բազմերամբ վեհագունիցըն. — Տպ. 898, ԴԶ, Մեծ. — Ձեռ. 1335 (էջ 661), 1556 (262), 1654 (635), 1700 (589):

4. — Գոյ զօրութեանց թագաւորն. — Տպ. 881, ԲԿ, Տէր յերկնից. — Ձեռ. 1654 (էջ 630), 1700 (593):

5. — Ես սասցի Տէր ողորմեա. — Տպ. 916, ԴԿ, Տէր. — Ձեռ. 1556 (էջ 269), 1648 (725), 1654 (639), 1700 (592):

6. — Ձահագին համբաւ. — Տպ. 900, ԴԶ, Ողորմեա. — Ձեռ. 1556 (էջ 260), 1654 (633), 1700 (585), 3767 (թղ. 277ա):

7. — Ընդ զըւարթունս երկնից. — Տպ. 896, ԳԿ, Տէր. — Ձեռ. 1654 (էջ 631), 1700 (566):

8. — Ժողովեալքս ի սաճար փառաց. — Տպ. 906, ԴԶ, Տէր. — Ձեռ. 1556 (էջ 259), 1654 (632), 1700 (585):

9. — Ի գալըստեան Տեառն. — Տպ. 881, ԲԿ, Տէր. — Ձեռ. 1654 (էջ 629), 1684 (782), 1700 (593):

10. — Լեառն վիմածին. — Տպ. 891, ԳԿ, Մեծ. — Ձեռ. 1335 (էջ 661), 1654 (631), 1700 (566):

11. — Մեծ և անեղ է. — Տպ. 909, ԴԶ, Տէր. — Ձեռ. 1556 (էջ 263), 1583 (364), 1654 (636), 1700 (591):

ՀԱՅ ՆԿԱՐԱԳՆԵՐ

Ս Ա Մ Ո Ի Է Լ Ն Ա Ղ Ա Ծ

(1415? - 1475?)

Պատկերահան վարպետ Սամուէլ որդին էր Տիրացու քահանայի: Մնած է ժՅ. Դարու առաջին քառորդին ենթադրաբար: Աշակերտած է Յովհաննէս քահանայի: Եղած է ուսուցիչ Երզնկացի Նաղաշ Յովհաննէս քահանայի: Ընդհանրապէս ապրած եւ աշխատած է Երզնկայի շրջանին մէջ: Իր գրական եւ մանրանկարչական գործունէութիւնը կ'ընդգրկէ 1436-1473 տարիները: Այդ շրջանի արդիւնքէն կրնանք յիշել հետեւեալները:

- 1. — Շարակնոց, 1436, Երզնկա: Գրիչ՝ Սամուէլ: Ծաղկող՝ Յովհաննէս Գհն. Մեկտինցի. — Յիշտ. ժՅ. Դարի, Ա. Մասն, թիւ 513:
- 2. — Յայամաուորք, 1446, Երզնկա: Գրիչք բազում, Մինաս սարկաւազ, Սարգիս, եւայլն: Նկարող՝ Սամուէլ վարպետ: Ստացող՝ Ներսէս քահանայ. — Յիշտ. ժՅ. Դարի, Ա., թիւ 678:
- 3. — Շարակնոց, 1455: Գրիչ եւ ծաղկող՝ Սամուէլ. — Զեռ. Վիեննայի, թ. 1000:
- 4. — Ժամագիրք Ատենի, 1465: Գրիչ եւ ծաղկող՝ Սամուէլ. — Զեռ. Հալէպի. թիւ 111: Յիշտ. ժՅ. Դարի, Բ., թիւ 303:

Ըստ ցուցակագրող Արտաւազդ արքեպիսկոպոսի «էջ 93ի խորանը փառահեղ գործ մ'է եւ ուշադրութեան արժանի: ...: Ոսկենկար այս խորանը շքեղ համադրութիւն մը կը ներկայացնէ նոյն էջի լուսանցազարդին եւ սկզբնատառին հետ» (Յուցակ Զեռ. Հալէպի, 1935, էջ 190):

- 5. — Գանձարան, 1466, Երզնկա: Գրիչ՝ Սամուէլ Նաղաշ. — Յիշտ. ժՅ. Դարի, Բ., թիւ 317:
- 6. — Աւետարան, 1473, Երզնկա: Գրիչ՝ Սանուէլ երէց: Ծաղկող՝ վարպետ Սամուէլ պատկերահան. — Յիշտ. ժՅ. Դարի, Բ., թիւ 448:

Մ Ի Ն Ա Ս Կ Բ Օ Ն Ա Ի Ո Ր

(1415? - 1485?)

Մինաս նկարող ծնած է 1415ին մօտաւորապէս: Հօրը անունն էր Մաղթում, մայրը կը կոչուէր Մսրմելիք: Աշակերտած է Մկրտիչ Օրբէլինց (Աւրէկենց) վարդապետին, Արգելանայ կամ Յուսկան Որդւոյ վանքին մէջ: Իր գործունէութեան զլիսաւոր կեդրոնները եղած ըլլալ կը թուին Արգելանայ Վանքը եւ Աղթամար, ուր ծաղկած եւ նկարազարդած է շրջակայ զանազան վայրերու մէջ գրուած բազմաթիւ ձեռագիրներ: Ունեցած է աշակերտներ. ծանօթ են Կարապետ Աղթամարցի, Մուրատ սարկաւազ՝ ծաղկող (1460-1471), եւ Կարապետ Բերկրցի՝ նկարող (1471-1500):

- 12. — Մերձեցոյ ես. — Տպ. 906, ԴԶ, Տէր. — Զեռ. 1556 (էջ 261), 1566 (618), 1654 (634), 1700 (586), 3051 (590):
- 13. — Յանրսկրգրնական ծոցոյ Հօր. — Տպ. 892, ԳԿ, Ողբ., ծայրանուն Յակոբ. — Զեռ. թիւ 1654 չուսի:
- 14. — Որ ի Հօրէ առաքեցար. — Տպ. 915, ԴԿ, Տէր. — Զեռ. 1556 (էջ 269), 1654 (639), 1684 (782), 1700 (593):
- 15. — Որ հայրական իշխանութեամբ. — Տպ. 905, ԴԶ, Տէր. — Զեռ. 1556 (էջ 259), 1654 (632):
- 16. — Սարսափելի որոտամբ. — Տպ. 882, ԲԿ, Տէր, ծայրանուն Սարգիս. —

- Զեռ. 1566 (էջ 646), 1567 (էջ 609), 1578 (թղ. 349ր), 1642 (էջ 778), 1648 (731), 1654 չուսի, 1655 (558), 1671 (757), 1684 (781), 1700 (594), 3466 (696), 3767 (թղ. 280ա):
- 17. — Փառք քեզ Աստուած. — Տպ. 895, ԳԿ, Տէր. — Զեռ. 1654 (էջ 630), 1700 (595), 1987 (465):

Ինչպէս կը տեսնուի վերեւ արուած ցանկին մէջ, խնդրոյ առարկայ 17 պատկերները կը բաժնուին երեք տեսակի. Մեծացուցէ 3, Ողորմեա 2, Տէր յերկնից 12: Այս վերջին տեսակը արդէն յայտնի է իր թուական առաւելութեամբ մեր Շարակնոցին մէջ:

Ն. ԱՐՔ. ՄՈՎԱԿԱՆ